2024

ԱԼԲԵՐՏ ԱՋԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ

ՀՀ ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Ծիծեռնակաբերդի խճուղի հ. 2/2

# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

ԱԼԲԵՐՏ ԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ

ՀՀ ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Ծիծեռնակաբերդի խճուղի հ. 2/2

# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ տնօրեն՝ Ա. Սեդոյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ

Երևան 2024

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ....5
1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն ....5
1.2 Հապավումներ ....5
1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը ....6
1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը ....7
1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) ....11
1.5.1 *Ներկա վիճակ. Նախատեսվող գործունեության բնութագիր* ....11
1.5.2 *Սառը, տաք ջրամատակարարման, կենցաղային եվ անձրեվաջրերի հեռացման ցանցեր* ....14
1.5.3 *Էլեկտրոմատակարարում* ....15
1.5.4 *Ջեռուցում և օդափոխություն* ....16
1.5.5 *Գազամատակարարում* ....17
1.5.6 *Կանաչապատման աշխատանքներ* ....17
1.5.7 *Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ* ....18
1.5.8 *Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ* ....19
1.5.9 *Գլխավոր հատակագիծ* ....20
1.5.10 *Շինարարական հրապարակի կազմակերպման հատակագիծ* ....24
2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ ....25
2.1 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը ....26
2.2 Շինարարության ժամկետները ....27
2.3 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները ....27
2.3.1 *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում* ....27
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ ....29
3.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները ....29
3.2 Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը ....30
3.3 Կլիման ....31
3.4 Օդային ավազան ....36
3.5 Ջրային ռեսուրսներ ....41
3.6 Հողերի նկարագիրը ....41
3.7 Հողային ռեսուրսներ ....42
3.8 Բուսական աշխարհ ....42
3.9 Կենդանական աշխարհ ....43
3.10 Պատմամշակույթային հուշարձաններ ....43
3.11 Թափոնների կառավարում ....103
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ....104

4.1 Ռիսկերի գնահատում ....104
4.2 Արտանետումների աղբյուրները ....105
4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն ....105
4.3.1 *Մթնոլորտային օդ* ....105
4.3.2 *Ջրային ռեսուրսներ* ....105
4.3.3 *Հողային ռեսուրսներ* ....106
4.3.4 *Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը* ....106
4.3.5 *Հակահրդեհային միջոցառումներ* ....107
4.3.6 *Աղմուկ և թրթռում* ....107
4.3.7 *Թափոնների կառավարում* ....108
4.3.8 *Էներգախնայողության միջոցառումներ* ....108

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ ....109

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ....110

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ ....113

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ....115

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ....116

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | **«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ** |
| Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ | **ՀՀ Ք. Երևան, Փ. Բյուզանդի 1/3**<br>**Հեռ. +374 10 56 27 11**<br>**+374 10 58 00 63**<br>**E-mail. yerpro@yandex.ru** |
| Նախատեսվող գործունեության հասցեն՝ | **ՀՀ ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Ծիծեռնակաբերդի խճուղի հ. 2/2** |
| Հեռախոս՝ | **+37499994222** |
| Աշխատանքային նախագծի մշակող՝ | **«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ**<br>**ՀՀ Ք. Երևան, Փ. Բյուզանդի 1/3**<br>**Հեռ. +374 10 56 27 11**<br>**+374 10 58 00 63**<br>**E-mail. yerpro@yandex.ru** |
| ՇՄԱԳ կազմող՝ | **Ա/Ձ Արամ Գալոյան**<br>**ՀՀ ք. Երևան Սևանի փ. շ. 86/2**<br>**Հեռ. բջջ. +374 99 994222**<br>**galoyan.aram@gmail.com** |

## 1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բազմաֆունկցիոնալ մարզադպրոց:

Ալբերտ Ազարյանի անվան մարզադպրոցի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Ծիծեռնակաբերդի խճուղի հ. 2/2 հասցեում:

Մարզադպրոցի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան[1]:

Մարզադպրոցի կառուցման աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեյան իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Երևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

[1] ՀՀՇՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ
ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

## 1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջան, Ծիծեռնակաբերդի խճուղի հ. 2/2 հասցեում նախատեսվող մարզադպրոց կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

*ՀՀ Սահմանադրություն* (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

***«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ*** օրենք (2023) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 12-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

*«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք* (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

*«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)* - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

*«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը* (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

*«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)* - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

*«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք* (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

*«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք* (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

*«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք* (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

*«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.*

*«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.*

*«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,*

*«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը*

*«ՀՀ ջրային օրենսգրք» 2002թ.*

*«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք 27.11.2006*

***ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն*** որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

***ՀՀ կառավարության 22.02.2018թ.–ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին»*** N 191-Ն որոշում:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.–ի հուլիսի 31-ի ***«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»*** N 781-Ն որոշում:

*ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն* ***«Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:***

*ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն* ***«Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի***

*սեպտեմբերի 19-ի ն 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի ն 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում:*

*2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,*

*Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,*

*Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերություն,*

*Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ*

*«Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի ն 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 8 փետրվարի 2018 թվականի N 108-Ն որոշում*

*ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ. թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»,*

*ՀՀ կառավարության 16.02.2006թ. թիվ 392-Ն որոշում «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբեր՝ համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»,*

*ՀՀ առողջապահության նախարարի 28.03.2017թ. «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N2.2.4.016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին*

*ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 12-Ն հրաման*

*ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ. «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» թիվ 43-Ա հրաման, ՍՆԻՊ 2.08.02-89 «Հասարակական շենքեր և շինություններ»,*

*ՀՀ քաղաքաշինության նախարարի 09.04.2014թ. ՀՀՇՆ 31-03.012014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին N 103-Ն հրաման*

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

## 1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

### 1.5.1 *Ներկա վիճակ. Նախատեսվող գործունեության բնութագիր*

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Կենտրոն վարչական շրջան, Ծիծեռնակաբերդի խճուղի հ. 2/2 հասցեում:

Դիտարկվող հողատարածքի մակերեսը կազմում է 1.5509հա:

Հողամասի բնութգրերը՝

- Կադաստրային ծածկագիրը՝ 01-006-0619-0036
- Մակերեսի չափը (հա)՝ 1.5509
- Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
- Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հողատարծքը ազատ է կառուցապատումից, հիմնականում հարթ, անմշակ և սակավ բուսականությամբ տարածք է:

Հողատարածքը գտնվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում, նրա հարավային մասում, Ծիծեռնակաբերդի խճուղու սկզբնամասում, Ծիծեռնակաբերդի խճուղու և Աթենքի փողոցների միախառնման հատվածից մոտ 300.0 մետր հյուսիս-արևելք, "ԴԱԼՄԱ" առևտրի կենտրոնի հարավային կողմում, նրանից մոտ 600.0 մետր հեռավորության վրա: Մոտակա քարե շինությունը գտնվում է 18մ հեռավորության վրա:

Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա բացակայում են:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Ըստ իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրության դիտարկվող հողամասում բուսահողը բացակայում է:

Գլխավոր հատակագծից և ռելիեֆից ելնելով մարզադպրոցը նախագծվել է վեց մասից: Շենքի տակ նկուղային հարկում կա 88 մեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղի, տեխնիկական տարածք, ինչպես նաև մարզասրահ, գույքի պահեստներ և արհեստանոց:

Գլխավոր ճակատի երկհարկանի հատվածում, որը գտնվում է A-D և 1-19 առանցքներում, կան կենցաղային տարածքներ (հանդերձարաններ, սանհանգույց), վարչական և սպասարկման տարածքներ:

Ձախ հետևի մասում E-L և 1-5 առանցքների միջև կա մարզասրահ՝ առանցքներում 25,2 x 42,0 մ չափերով և 12,5 մ բարձրությամբ մինչև տանիքի կրող կառուցվածքների ստորին մակարդակը:

E-K և 5'-14' առանցքների միջև միջին հետևի մասում կա ունիվերսալ մարզադահլիճ՝ առանցքներում 30 x 50,4 մ չափսերով և 12,5 մ բարձրությամբ մինչև տանիքի կրող կառուցվածքների ստորին մակարդակը:

Մարզադահլիճն ունի հանդիսատեսի համար նախատեսված տրիբունա՝ մինչև 532 նստատեղով:

Հետևի աջ մասում՝ E-L և 15-19 առանցքների միջև, կա գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի սրահ՝ 25,2 x 42,0 մ առանցքային չափսերով և 12,5 մ բարձրությամբ մինչև տանիքի կրող կառուցվածքների ստորին մակարդակը:

Տանիքները երկթեք են՝ փոքր թեքությամբ, կրող կառուցվածքները՝ մետաղական, ջրահեռացումը՝ կազմակերպված:

Նախատեսված են ելքեր դեպի տանիք աստճանավանդակների և մետաղական ելարանների միջոցով:

Ապահովված է հրշեջ մեքենայի մուտքը դեպի տարածք և հասանելիությունը շենքի յուրաքանչյուր հատվածի:

Ջեռուցման և օդափոխության կենտրոնացված համակարգի շնորհիվ մարզադպրոցի յուրքանչյուր հատվածում հնարավոր կլինի ստանալ նախընտրելի ջերմաստիճան:

Շենքի հարկերի միջև կապը կազմակերպված է երեք աստիճանավանդակներով և մեկ ունիվերսալ վերելակով:

Աստիճանավանդակների դռները նախատեսվում են հակահրդեհային և ինքնափակվող:

Բոլոր աստիճանավանդակներն ունեն բնական լուսավորություն:

Շենքի ճակատները նախատեսված են ժամանակակից ճարտարապետական լուծումներով՝ օգտագործելով ինչպես բնական քար ( բազալտ), այնպես էլ ապակի, մետաղ և այլ ժամանակակից նյութեր:

Հաշվի են առնվել մարզադպրոցում սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց (նաև երեխաների և դեռահասների) համար մարզահամալիրի հասանելիությունն ապահովելու առանձնահատկությունները, ներառյալ սանհանգույցներում:

Նախատեսվում է նաև տարածքի ընդհանուր բարեկարգում՝ իրականացնելով ճեմուղիներ և կանաչապատ հատվածներ: Ինչպես նաև տեղադրվելու են նստարաններ, աղբամաններ և լուսատուներ:

Հ ԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.

- հարկերի քանակը՝ 2 հարկ, (մասնակի 3)
- հանդիսատեսի նստատեղերի քանակը՝ 532,
- շինության չափերը առանցքներով՝ 102,5 x 57,05 մ
- մարզասրահի առանցքային չափերը՝ 25,2 մ x 42,0 մ
- մարզասրահի ընդհանուր չափերը՝ 24,2 մ x 41,5 մ
- տրիբունաներով ունիվերսալ դահլիճի առանցքային չափերը՝ 50,4 մ x 30,0 մ
- ունիվերսալ դահլիճի ընդհանուր չափերը՝ ստենդներով՝ 49,9 մ x 29,5 մ
- գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի դահլիճի առանցքային չափերը՝ 25,2 մ x 42,0 մ

-գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի դահլիճի ընդհանուր չափերը՝ 24,2 մ x 41,5 մ

**Հողամասի մակերեսը՝ 15509.0 ք.մ.**

Կառուցապատման մակերեսը՝ 5790.3 ք.մ.

Կանաչապատման մակերեսը՝ 4187.2 ք.մ.

Անջրանցիկ մակերեսը՝ 5531.5 ք.մ.

**Շինության ընդհանուր մակերեսը՝ 10661.5 ք.մ.**

ներառյալ.

հարկ ըստ -4.500 նիշի (կայանատեղի)՝ 4051.0 ք.մ.

1-ին հարկ ըստ. 0.000 նիշի՝ 4941.6 ք.մ.

2-րդ հարկ ըստ. 4500 նիշի՝ 1257.6 ք.մ.

տեխնիկական (3-րդ) հարկ ըստ 8.400 նիշի՝ 411.3 ք.մ.

**Շինության հարկերի ընդհանուր մակերեսը՝ 17098.2 ք.մ.**

ներառյալ.

հարկ ըստ -4.500 նիշի (կայանատեղի)՝ 5504.2 ք.մ.

1-ին հարկ ըստ. 0.000 նիշի՝ 5559.4 ք.մ.

2-րդ հարկ ըստ. 4500 նիշի՝ 5539.8 ք.մ.

տեխնիկական (3-րդ) հարկ ըստ 8.400 նիշի՝ 494.8 ք.մ.

Շինության շինարարական ծավալը 0.000 ից վերև՝ 81004.1 խ.մ.

Շինության շինարարական ծավալը 0.000 ից ներքև՝ 27521.0 խ.մ.

Շինության ընդհանուր շինարարական ծավալը ՝ 108525.1 խ.մ.

Քաղաքացիական պաշտպանության եվ արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ մարզադպրոցը ունի ստորգետնյա հարկ նախատեսված ավտոկայանատեղիների համար և անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց:

Նախագիծը մշակված է համաձայն.

ՀՀՇՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

ՀՀՇՆ 31-01-2014 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ. ՄԱՍ1 .ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ

ՀՀՇՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 11.09.2017Թ. ԹԻՎ 128-Ն ՀՐԱՄԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇԱՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

### 1.5.2 *Սառը, տաք ջրամատակարարման, կենցաղային եվ անձրեվաջրերի հեռացման ցանցեր*

Սառը ջրի սնուցումը նախատեսվում է իրականացնել տարածքի դիմացով անցնող Ø300 ջրագծից, Ø63մ խողովակով:

Միացումը իրականացնել տեղում փաստացի իրավիճակից ելնելով: Միացման կետում նախատեսել փականային հոր Ø2000 մմ, որում Ø50մմ սողնակ կցաշուրթով և հակարդեհային հիդրանտ Ø125մմ:

Խմելու տնտեսական և հակարդեհային ջրամատակարարման ցանցերը նախատեսված են համակցված: Տաք ջրամատակարումը նախատեսված է կառույցի տանիքում, 8.40 նիշում նախատեսվող անհատական կաթսայատնից, որտեղից խողովակաշարերը իջնում եմ -4.50 նիշ, որտեղ առաստաղի տակով նախատեսվում բաժանարար ցանցեր սառը ջրի հետ համատեղ, որտեղից սառը/տաք ջրամատակարարման ցանցերը միացվում են հորաններում նախագծված տաք/սառը ջրամատակարարման ցանցերի իր տաք ջրի շրջապտույտի խողովակով:

Կառույցի պարիսպի հարող մասում նախատեսել Ø500մմ դիտահոր, որում նախատեսվում է ջրաչափական հանգույց Ø 40 ջրաչափով:

-4.50 նիշում ավտոհանգրվանում նախատեսված է պատահական ջրերի հեռացման ցանց, որտեղից իտալական «PEDROLO» ֆիրմայի տիպ VXm15/50. Q=6.0 խմ/ժ, H=10ս N=1 կվտ պոմպի միջոցոող ջուրը մղվում է դեպի բակային անձրեվաջրերի ցանց:

- 4.50 նիշում նախատեսված է ավտոհանգրվանի համար հրդեհաշիջման ցանց սպլինկլերային համակարգով: Հրդեհաշիջման ջրի պաշարի համար նախատեսված է բակ V=75 մ$^3$, իր պոմպակայանով "GRUNDFOS" ֆիրմայի 2 պոմպով:

Ցանցերի համար նախատեսված են պոլիպրոպիլենե խողովակներ Ø40–15մմ և պողպատե Ø50-100մմ:

Թաղման միջին խորությունը հողի նիշից ընդունել 1.6մ ավազի նախապատրաստական շերտով: Կենցաղային կեղտաջրերը սան սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում է ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց Փ100-150 խողովակներով 4 տեղամասերով: Այնուհետև միացնելով Աթենքի փողոցով անցնող Փ500 կոյուղատարին Փ200 մմ խողովակով: Նախագծում նախատեսված են կոյուղու պոլիվինիխլորիդե խողովակներ Փ50÷150 մմ ներքին ցանցերի համար, իսկ արտաքին ցանցերի համար Փ200 պոլիէթիլենե ակասավոր խրղովակներ:

Հարթ տանիքից Ø150մմ ջրընդունիչներով անձրևաջրերը հավաքվելով ներքին պատի վրայով իջեցվում է -4.50 առաստաղի տակ, որտեղից հեռացվում է բակային ցանց 6 տեղամասով, այնուհետեվ բակային ցանցի միջոցով ջրերը հեռացվում և միացվում են Աթենքի փողոցով անցնող Ø400 հեղեղատարին: Ցանցերի համար նախատեսված են Ø150—200սմ պոլիվինիխլորիդե խողովակներ շենքի ներսում, իսկ արտաքին ցանցի համար նախատեսված են Ø 250 պոլիէթիլենե ակոսավոր խողովակներ:

Անձրեևաջրերի խողովակների մեջ նախատեսել էլեկտրազալարներ, որը հնարավորություն է տալիս անձրեվաջրերը խողովակների մեջ չսառչելու, խողովակները ամրացնել պատի վրա նորմատիվ հեռարությունններով: Ցանցերի վրա նախատեսված են դիտահորեր, միացումների անկյունների և նորմատիվային հեռավորրություններից վրա ստուգումներ կատարելու հետագա շահագործման համար:

Սառը/տաք ջրամատակարարման խողովակները ներկել հակակոռոզիոն ներկով երկու անգամ: -4,50 նիշի հրդեհաշիջման ցանցերը նախատեսված են պողպատե խողովակներ Ø25–100մմ: Բոլոր հանգույցներում ճուղավորումների վրա նախատեսել փականներ համապատասխան տրամագծի ցանցի բնականոն աշխատանքը ապաահովելու համար: Ցանցի վրա նախատեսված են սպլինկլերներ հրդեհաշիջման համար:

### 1.5.3 *Էլեկտրոմատակարարում*

Համաձայն ՀԷՑ ՓԲԸ NSՊ-ՃՀԱ-04/0799 (15.09.2023թ) գրությանը մարզադպրոցի էլեկտրամատակարարումը կիրականացվի 110/6 կՎ ՛՛Ծիխեռնակաբերդ՛՛ ենթակայանից 6կՎ ԲՍ-ից: Օբյեկտի նկուղային հարկում նախագծված է 2x400կՎԱ ենթակայան, որի ABP-ով երկսեկցիոն 0.4կՎ վահանը հանդիսանում է որպես գլխավոր բաշխիչ վահան:

Վահանի բաշխիչ պանելներից մալուխատարի միջոցով անցկացվում են թվով 9 հատ սնող մալուխներ, որոնցից 7-ը ներանցում են 2 թևերի միջանկյալ բաշխիչ վահաններ, իսկ 2-ը-անմիջապես մուտք են գործում նկուղային հարկի օդափոխության խուցի և պոմպակայանի բաշխիչ վահանները:

### 1.5.4 *Ջեռուցում և օդափոխություն*

Մարզա-առողջարանային կենտրոնի ջեռուցման, հովացման և օդափոխության նախագիծը կատարված է համաձայն СНиП 2.03.02-89, СНиП II-7.11-70 և ՀՀ գործող Շ.ն և կ–ի և պատվիրատուի պահանջի:

ՋԵՌՈՒՑՈՒՄ.- Շենքի ջերմամատակարարումն իրականացվում է շենքի տանիքում կառուցվող կաթսայատնից: Ջեռուցման համար արտաքին հաշվարկային ջերմաստիճանն ընդունված է t=-19°C:

Ընտրված է երկխողովականի, ջերմատարի փակուղային շարժմամբ ջեռուցման համակարգ:

Որպես ջեռուցման և հովացման սարքեր ընտրված են արտասահմանյան ֆիրմայի արտադրության օդամղիչ կոնվեկտորներ (ֆանկոյլներ) և ալյումինե ջեռուցիչներ:

3 մարզադահլիճների ջեռուցումը կատարվում է ZIP 3, L=6,0մ «Zehnder» ֆիրմայի արտադրության ճառագայթային պանելների միջոցով:

Մատակարարող և հետադարձ խողովակները մոնտաժվում են ջերմամեկուսացված պողպատյա և պոլիպրոպիլային խողովակներով, որոնք անցնում են առաստաղի տակով, մասամբ էլ. հատակի միջով:

Անհրաժեշտ ջերմության ընդհանուր ծախսը կազմում է Qջ=250կՎտ

Qօդ-220կՎտ

ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ,» Ընտրված է օդափոխության արհեստական համակարգ: Ունիվերսալ դահլիճի օդափոխությունը իրականացվում է Ն.Հ-4, Ա.Հ-27 ներածման - արտածման սարքի միջոցով, որը տեղադրված տանիքի վրա և համալրված է

1.մուտքի և ելքի վրա տեղադրված կարգավորիչ փականներով

2.զտիչով

3.օդի թերթավոր ռեկուպերատորով

4.օդատաքացուցիչով

5.օդասառեցուցիչով 6.ներածման օդամղիչով

7.արտածման օդամղիչով

8.ճկուն ներդիրով

9. հիմքի հենոցով

10. ավտոմատիկայի կոմպլեկտով

Ն.Հ-5- Ա.Հ-25 ներածման արտածման համակարգը նախատեսված է մարզումների դահլիճի օդափոխության համար, իսկ Ն.Հ-6-Ա.Հ-27 համակարգը՝ գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի դահլիճի համար: Նշված համակարգերը տեղադրված են +8.40նիշի տանիքի վրա:

Նախատեսված է օդի ներածման համակարգ -4.50 նիշում տեղադրված մարզասրանի, պահեստների և արհեստանոցի համար՝ Ն.Հ-3, իսկ արտածումը կատարվում է Ա.Հ-3, 4, 5, 6, 7 համակարգերով:

Թարմ օդի ներածում է նախատեսված հանդերձարաններին, մարզիչների սենյակներին Ն.Հ-7, 8-համակարգերով, իսկ արտածումը կատարվում է սան. հանգույցներից առանցքային օդամուղների և Ա.Հ-8, 9, 10, 11, 12, 13, 14 արտածման համակարգերի օգնությամբ:

Ն.Հ-9 ներածման համակարգը +4.50 նիշի հանդերձարանների համար է նախատեսված, Ն.Հ-10-ը վարչական սենյակների և խորհրդակցությունների դահլիճի: Արտածումը նշվածներից կատարվում է Ա.Հ-16 17, 18, 19, 20, 21, 23, 24 արտածման համակարգերիի միջոցով:

Նախատեսված է նաև օդի ներածում ավտոկայանատեղի համար Ն.Հ-1, Ն.Հ-2 համակարգերի միջոցով, իսկ արտածումը կատարվում է երկու զոնաներից հավասարապես (վերին և ներքին) Ա.Հ-1, 2 համակարգերի օգնությամբ:

ՀՈՎԱՑՈՒՄ.- Շենքում նախատեսված է նաև հովացման համակարգ, որն իրականացվում է ֆանկոյլների և չիլլերների օգնությամբ: Հովացման համար ընդհանուր հովացման ծախսը կազմում է Qh=285կվտ:

Էլեկտրաէներգիայի խնայողականության, սառեցման զոնաների սառնամատակարարման ռեժիմը ճիշտ կարգավորելու, ինչպես նաև ռեզերվային և փոխարինող հզորության առկայությունը ապահովելու համար նախատեսված է մինչև 60% հզորության 2 հատ (Qu=200կվտ) հզորության չիլլերներ:

Չիլլերները տեղադրվում են տանիքի վրա:

ԾԽԱՀԵՌԱՑՈՒՄ,- Ավտոկայանատեղում նախատեսված է ծխահեռացման համակարգ: Դ.Հ-1, Դ.Հ-2 համակարգերի միջոցով կատարվում է օդի դիմհար ավտոկայանատեղին և աստիճանավանդակների նախամուտքերին, իսկ ծխահեռացումը կատարվում է Ծ.Հ-1 և Ծ.Հ-2 ծխահեռացման համակարգերի միջոցով: Ծխահեռացման համակարգի օդամուղները տեղադրված են +8.40 նիշում նախատեսված տեխնիկական սենյակում:

### 1.5.5 *Գազամատակարարում*

Գազամատակարարման տեխնիկական պայմաններ ստանալու համար կառուցապատող ընկերությունը դիմել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին:

### 1.5.6 *Կանաչապատման աշխատանքներ*

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ», որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակային և քանակային կազմը ներկայացված կանաչապատման սխեմայի վրա:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,

- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,

- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,

- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,

-Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումը իրականացվելու է ցնցուղային եղանակով, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Կանաչապատ տարածքների ոռոգման ջրամատակարարման համար նախատեսվում է օրենքով սահմանված կարգով դիմել ԵՐԵՎԱՆ ջրօգտագործողների ընկերությանը:

### 1.5.7 *Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ*

Կանաչապատ տարածքի 1 մ$^2$-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ$^2$:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ $n_б = 0.006$ մ$^3$/մ$^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{ս.ջ} = (n_б \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 4187,2$ մ$^2$,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, K = 2

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, t = 175 օր

$$W_{ս.ջ} = (0.006 \times 4187,2) \times 2 \times 175 = 8793,12 \text{ մ}^3/\text{տարի}$$

1.5.8 *Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ*



1.5.9 *Գլխավոր հատակագիծ*

Գլխավոր հատակագիծ Մ 1:2000
Генплан М 1:2000




Գլխավոր հատակագիծ ( բարեկարգում ) Մ 1:250
Генплан ( благоустройство ) М 1:250
Պայմանական նշաններ
Условные обозначения
Գազոններ
Газоны
Բետոնե մայթի սալիկներ
Бетонные тротуарные плитки
Մայթեր բնական քարի խառը շարով
Тротуары брекчая из натурального камня
Ասֆալտբետոնի ծածկույթ
Покрытие из асфальтбетона
Գազոններ
Газоны
Բազալտե եզրաքարեր
бордюры из базальта
Զբոսայգու նստարաններ
Парковые скамейки
Զբոսայգու աղբամաններ
Парковые урны
Զբոսայգու լուսատուներ
Парковые светильники
Զբոսայգու լուսատուների, նստարանների և աղբամանների տարբերակների օրինակներ
Примерные образцы парковых светильников, скамей и урн
0.00=999.20
-4.50=994.70
0.00=999.20
57,05
102,5
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Տ. ԱՎԻՆՅԱՆ
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
ПРИМЕЧАНИЯ
ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ
N ԵՔ-ՀՄԱԽԱԸՁՔ-23/1
Լ. ՄՐՐԻԿՅԱՆ
Л. МРРИКЯН
Ր. ՄՐՐԻԿՅԱՆ
Р. МРРИКЯН
«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ
"БЮРО ПО РЕАЛИЗАЦИИ ИНВЕСТИЦИОННЫХ ПРОГРАММ ПО ЗАСТРОЙКЕ ЕРЕВАНА" (НКО)
Проект новой спортивной школы гимнастики имени Альберта Азаряна в Ереване
ԱԼԲԵՐՏ ԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ
СПОРТИВНАЯ ШКОЛА ИМЕНИ АЛЬБЕРТА АЗАРЯНА
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
АРХИТЕКТКРА
Գլխավոր հատակագիծ ( բարեկարգում ) Մ 1:250
Генплан(благоустройство)М1:250
ԱՆ РП
Δ - 9 АР- 9




Հողամասի շրջագարծային կետեր (կոորդինատներ)

| | X | Y | |
|---|---|---|---|
| 1 | 4449865.76 | 8456598.23 | 133.05 |
| 2 | 4449856.43 | 8456730.96 | 130.95 |
| 3 | 4449728.61 | 8456702.48 | 39.92 |
| 4 | 4449729.60 | 8456662.57 | 19.40 |
| 5 | 4449710.20 | 8456662.57 | 43.12 |
| 6 | 4449736.90 | 8456628.72 | 0.28 |
| 7 | 4449736.69 | 8456628.53 | 3.27 |
| 8 | 4449738.74 | 8456625.98 | 42.06 |
| 9 | 4449765.92 | 8456593.88 | 99.93 |
| 1 | 4449865.76 | 8456598.23 | |




| | X | Y | |
|---|---|---|---|
| 1 | 4449972.52 | 8456602.88 | 21.38 |
| 2 | 4449979.41 | 8456623.13 | 25.73 |
| 3 | 4449985.67 | 8456648.08 | 15.00 |
| 4 | 4450000.65 | 8456647.46 | 42.00 |
| 5 | 4449983.52 | 8456685.81 | 22.00 |
| 6 | 4449999.08 | 8456701.36 | 0.96 |
| 7 | 4449999.08 | 8456702.32 | 40.05 |
| 8 | 4449998.99 | 8456742.37 | 12.41 |
| 9 | 4449986.59 | 8456742.36 | 26.48 |
| 10 | 4449987.46 | 8456768.83 | 64.00 |
| 11 | 4449925.74 | 8456751.90 | 5.50 |
| 12 | 4449925.74 | 8456746.40 | 71.00 |
| 13 | 4449856.43 | 8456730.96 | 133.05 |
| 14 | 4449865.76 | 8456598.23 | 106.86 |
| 1 | | | |

| | X | Y | |
|---|---|---|---|
| 1 | 4449865.76 | 8456598.23 | 133.05 |
| 2 | 4449856.43 | 8456730.96 | 130.95 |
| 3 | 4449728.61 | 8456702.48 | 39.92 |
| 4 | 4449729.60 | 8456662.57 | 19.40 |
| 5 | 4449710.20 | 8456662.57 | 43.12 |
| 6 | 4449736.90 | 8456628.72 | 0.28 |
| 7 | 4449736.69 | 8456628.53 | 3.27 |
| 8 | 4449738.74 | 8456625.98 | 42.06 |
| 9 | 4449765.92 | 8456593.88 | 99.93 |
| 1 | | | |

| | X | Y | |
|---|---|---|---|
| 1 | 4449729.60 | 8456662.57 | 39.92 |
| 2 | 4449728.61 | 8456702.48 | 28.94 |
| 3 | 4449700.37 | 8456696.19 | 9.05 |
| 4 | 4449696.26 | 8456688.13 | 22.42 |
| 5 | 4449705.97 | 8456667.93 | 6.82 |
| 6 | 4449710.20 | 8456662.57 | 19.40 |
| 1 | | | |

1.5.10 *Շինարարական հրապարակի կազմակերպման հատակագիծ*



## 2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարծքը:

Ելնելով առկա պայմաններից շինություններըը բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները։

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում։

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների։

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով։

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1.Աշխատանքների բնույթից ելնելով, բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված։

2.Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով։

3.Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2.Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները։

3Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում։ Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները։

4Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը։

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

## 2.1 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև՝

| N Ը/Կ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | Չ/Մ | ՔԱՆԱԿ |
|---|---|---|---|
| 1 | ԱՎՏՈԻՆՔՆԱԹԱՓ ՄԵՔԵՆԱ 'ԿԱՄԱԶ' | ՀԱՏ | 8 |
| 2 | 'ՀԵՏ-ԲԱՀ' ԷՔՍԿԱՎԱՏՈՐ 'CAT' ՖԻՐՄԱՅԻ | ՀԱՏ | 2 |
| 3 | ԲՈՒԼԴՈԶԵՐ-ԱՄԲԱՐՁԻՉ 'CAT' ՖԻՐՄԱՅԻ | ՀԱՏ | 2 |
| 4 | ԱՎՏՈԿՌՈՒՆԿ XCT 25L5 ՄԱԿՆԻՇԻ | ՀԱՏ | 2 |
| 5 | ԲԵՏՈՆԱՏԱՐ ՄԵՔԵՆԱ (ՊՏՏԿ. ԹԱՓՔՈՎ) | ՀԱՏ | 6 |
| 6 | ԲԵՏՈՆԱԽՏԱՑՆՈՂ ՍԱՐՔ /ԽՈՐՔԱՅԻՆ/ | ՀԱՏ | 6 |
| 7 | ԲԵՏՈՆԱԽՏԱՑՆՈՂ ՍԱՐՔ /ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԱՅԻՆ/ | ՀԱՏ | 6 |
| 8 | ԵՌԱԿՑՄԱՆ ԱԳՐԵԳԱՏ CTH-550 | ՀԱՏ | 8 |

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարկան աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

## 2.2 Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հիմնական աշխատանքների ծավալների, աշխատատարության հաշվարկման և տեխնոլոգիական հաջորդականության հաշվառման հիման վրա:

Օբյեկտի կառուցման ընդհանուր տևողությունը կազմում է **30 ամիս**, **2,5 օրացուցային տարի** :

## 2.3 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

***Հողային աշխատանքներ՝***

Հանույթ՝ 62270մ$^3$
Ետլիցք՝ 11000մ$^3$

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևան քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

***Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝140 մարդ, որից***

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 7 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 37 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ – 96 մարդ

### 2.3.1 *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում*

Մարզադպրոցի կառուցման ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, մետաղ, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

**a)Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$W_{խ.տ.} = (n \times N + n_1 \times N_1) \times T$, որտեղ

**n** – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 7 մարդ

**N**– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ$^3$օր/մարդ

**n$_1$**– սպասարկող աշխատոների թվաքանակն է՝ 133 մարդ

**N$_1$** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ$^3$օր/մարդ

**T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 780 օր

**$W_{խ.տ.}$**= (7 x 0.016 + 133 x 0.025) x 780 = 2680.86 մ³/շին. ժամ. կամ 3.437մ³/օր:

**ե) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

**$Մ_1$ = $S_1$ x $K_1$ x T x D,** որտեղ՝

**$S_1$** – ջրվող տարածքի մակերեսը, 5790.3մ²,

**$K_1$** – 1 մ² ջրցանի նորմը, 0.0015 մ³,

**T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 600

**D** – ջրցանի օրեկան քանակը, 2 անգամ

**$Մ_1$** = 5790.3 x 0.0015 x 600 x 2 = 10422.54 մ³/շին. ժամ. կամ 17.37 մ³/օր

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 13103.4 մ³/շին. ժամ:**

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու և տարածքի ջրցանի համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով:

# 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

## 3.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆրակցիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Վարչական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևան քաղաքի հյուսիսային կողմում, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Եղվարդի հրաբխային սարավանդի սահմաններում, Հրազդան գետի աջափնյա հրաբխային բարձրավանդակի սահմաններում, գոգավորության կենտրոնական հատվածում

, տեղամասն իրենից ներկայացնում է լիցքային գրունտների կուտակման ճանապարհով հարթեցված տարածք: Կառուցապատված չէ:

Մակերեսի նիշերը տատանվում են 998.0-999.0 մետրի սահմաններում:

Նախնական զննման և փաստագրման արդյունքում կոմունիկացիոն հաղորդակցուղիներ չեն բացահայտվել:

<u>**Ջրային ցանցը**</u> տեղամասում քիչ զարգացած է: Տարածքի հիմնական ջրային երակ է հանդիսանում Հրազդան գետը, որի ռեժիմն ամբողջությամբ կարգավորված է տարատեսակ հիդրոտեխնիկական կառույցներով: Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքում ստորերկրյա ջրերը կապված են նեոգեն-չորրորդական հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին: Ըստ հրատարակված գրականության տվյալների ստորգետնյա ջրերը տեղամասում տեղադրված են 30.0 մետրից խորը

**Երկրաբանական կառուցվացքը.** Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Նեոգեն Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումները՝ բազալտ, անդեզիտա-բազալտներ, հրաբխային խարամ և մոխիր, հրաբխային ավազներ և այլն, որոնք ծածկված են բերվածքային առաջացումների շերտախմբերով ՝ խոշորա-բեկորային, մասամբ կավային գրունտներով:

Հորատման աշխատանքների ընթացքում մինչև 17.0 մետր խորությամբ փորված հորատանցքերում բացահայտվել են վերոհիշյալ բոլոր գրունտները:

<u>Հիդրոերկրաբանական տեսակետից</u> ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին, որոնք հորատանցքերով մինչև 15.0 մետր խորությունը չեն բացահայտվել, համաձայն ֆոնդային նյութերի տվյալների դրանք տեղադրված են 30.0 մետրից խորը: Սակայն մակերեսային ջրերը, ներթափանցելով գրունտային զանգվածների խորը տեղադրված շերտերի մեջ, կուտակվելով և զետեղվելով հրաբխային առաջացումների պալեոռելիեֆի "փոս ընկած", ճկված, խորդ ու բորդությունների մասերում, կարող են առաջացնել "թաքնված" ջրափոսեր, ջրակալված և խոնավացած տեղամասեր(վերնաջրեր):

Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները, փլուզում, սողանք, կարստ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ կառույցի հիմքերի վրա ներկա պահին բացակայում են: Սակայն անհրաժեշտ է նշել, որ տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող կարբոնատային կեղևի, խճային և մանրախճային գրունտների լցանյութը ցուցաբերում է ենթառողողամաշման (суффозия) առանձնահատկություններ:

Կավային գրունտները (կավավազներ) առանձին շերտով բացահայտվել են միայն թիվ 6 հորատանցքում, դրանք մասամբ մանրախճային են, հազվադեպ բեկորներով: Կառուցվածքային առանձնահատկություններից կախված հնարավոր չի եղել դրանցից վերցնել առավել շատ չխախտված կառուցվածքի փորձանմուշներ:

### 3.2 Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակերը`

| Քարայր-կացարան Այգեձոր-3 | մ.թ.ա. 20-16-րդ դարեր 14-16 դարեր | Հրազդանի ձախ ափին | — | 1.6/213 | Հ | ԵրՀԷԿ-1-ի ճանապարհի եզրին, Այգեձոր-1 քարայրից 500-600 մ գետի հոսանքին հակառակ ուղղությամբ | Լուսանկար վերբեռնել |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | կոորդ | համար անիշ | նշան. | հավելյալ նշումներ | պատկեր |
|---|---|---|---|---|---|---|---|
| Քարայր-կացարան Ծիծեռնակաբերդ-1 | մ.թ.ա. 20-16-րդ դարեր - 14-16-րդ դարեր | Հրազդանի աջ ափին | — | 1.6/214 | Հ | ԵրՀԷԿ-ի դիմաց, Ծիծեռնակաբերդ բերդշենի մոտ | Լուսանկար վերբեռնել |
| Քարայր-կացարան Ծիծեռնակաբերդ-2 | մ.թ.ա. 20-16-րդ դարեր - 14-16-րդ դարեր | Հրազդանի աջ ափին | — | 1.6/215 | Հ | Կիևյան կամրջից 500 մ գետի հոսանքով ներքև Ծիծեռնակաբերդ-1 քարայրից 1, 5 կմ հս-ա | Լուսանկար վերբեռնել |
| Քարայր-կացարան Ձորագյուղ-1 | ուշ միջնադար | | — | 1.6/216 | Հ | Սբ. Սարգիս եկղ-ու տակ դեպի ձորն իջնող աստիճաններից աջ | Լուսանկար վերբեռնել |
| Քարայր-կացարան Ձորագյուղ-2 | ուշ միջնադար | | — | 1.6/217 | Հ | Մանկական երկաթուղու վերջնակայարանի մոտ | Լուսանկար վերբեռնել |
| Քարայր-կացարան Ձորագյուղ-3 | 16-18-րդ դարեր | | — | 1.6/218 | Հ | «Հրազդան» մարզադաշտի դիմաց, հիվանդանոցի շենքի մոտ, Ձորագյուղ-2 քարայրից 200 մ հս, ձորի լանջին հայտնաբերված 1974 | Լուսանկար վերբեռնել |
| Քարայր-կացարան Նորագյուղ-1 | միջին քարի դար, 15-16-րդ դարեր | Նորագյուղ թաղամաս, Գետառ և Հրազդան գետերի խառնարանի մոտ | — | 1.6/219 | Հ | հայտնաբերված 1969 թվական | Լուսանկար վերբեռնել |
| Քարայր-կացարան Նորագյուղ-2 | քարի դար, մ.թ.ա. 30-15-րդ դարեր | Նորագյուղ թաղամաս, Դալմայի այգիների հվ– աե եզրին | — | 1.6/220 | Հ | հայտնաբերված՝ 1969 թվական, Նորագյուղ-1 քարայրից 100 մ հվ–աե | Լուսանկար վերբեռնել |
| Քարայր-կացարան Նորագյուղ-3 | միջին քարի դար, մ.թ.ա. 1-ին հզ, բրոնզի դար, 13- | Նորագյուղ թաղամաս, Դալմայի այգիների հվ-աե եզրին | — | 1.6/221 | Հ | հայտնաբերված՝ 1969 թվական, Նորագյուղ-2 քարայրից 80 մ գետի հոսանքով դեպի վեր | Լուսանկար վերբեռնել |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | կոորդ | համար անիշ | նշան. | հավելյալ նշումներ | պատկեր |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 14 դարեր | | | | | | |
| Քարայր-կացարան Նորագյուղ-4 | 16-17-րդ դարեր | ԵրՀԷԿ-ի դիմաց | — | 1.6/222 | Հ | | Լուսանկար վերբեռնել |
| Քարայր-կացարան Նորագյուղ-5 | 16-17-րդ դարեր | ԵրՀԷԿ-ի դիմաց | — | 1.6/223 | Հ | | Լուսանկար վերբեռնել |
| Քարայր-կացարան Նորագյուղ-6 | 14-16-րդ դարեր | Նորագյուղ թաղամաս, «Արարատ» գինու կոմբինատի դիմաց, Հրազդան գետի հին կամրջի մոտ | — | 1.6/224 | Հ | հայտնաբերված՝ 1973 թվական, Նորագյուղ-1 քարայրից 500 մ դեպի Նոր Կիլիկիա | Լուսանկար վերբեռնել |
| Քարայր-կացարան Նորագյուղ-7 | 14-16-րդ դարեր | Նորագյուղ թաղամաս, «Արարատ» գինու կոմբինատի դիմաց, Հրազդան գետի հին կամրջի մոտ | — | 1.6/225 | Հ | հայտնաբերված՝ 1973 թվական, Նորագյուղ-6-ի կողքին | Լուսանկար վերբեռնել |
| Ֆաբրիկայի շենք. Կարի ֆաբրիկան | 1930 թվական | Մեսրոպ Մաշտոցի պող. 8 | — | 1.6/226 | Տ | ճարտ.՝ Ա. Ահարոնյան, Հ. Մարգարյան, կոնստ՝ Զ. Հացագործյան | Լուսանկար վերբեռնել |
| Բնակելի տուն՝ Գաբրիել Գաբրիելյանցի | 1909-1914 թվականներ | Աբովյան փող. 1/4 | — | 1.6/227 | Տ | ճարտ.՝ Բորիս Մեհրաբյան | Լուսանկար վերբեռնել |
| Առանձնատուն («Դերասանի տուն») | 1954 թվական | Մ. Մաշտոցի պող. 13 | — | 1.6/227 | Տ | ճարտ.՝ Ս. Սաֆարյան |  Լուսանկար վերբեռնել |
| Հուշարձան Ալ. Սպենդիարյանի | 1971 թվական | Խանջյան փող. 27, Ալ. Սպենդիարյանի անվ. | — | 1.6/228 | Տ | | Լուսանկար վերբեռնել |

| հուշարձան | կառու ցված | վայր, հասցե | կորրդ | համար անիշ | նշ ան. | հավելյալ նշումներ | պատկեր |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | երաժշտական դպրոցի առջև | | | | | |
| Մզկիթ Թափաքաշի | 1687 թվական | Ռուսթավելու փող. 4 | — | 1.6/229 | Ղ | պարսկական աղոթասրահը՝ կիսաքանդ | Լուսանկար վերբեռնել |
| Վիշապաքար | Ք.ա. 3-2-րդ հազարամյակ | Կառավարական երրորդ շենքի գլխավոր ճակատի մոտ | — | 1.6/230 | Ղ | ցուլի պատկերով | Լուսանկար վերբեռնել |
| Տապանաքար | 10-17-րդ դարեր | Կառավարական երրորդ շենքի գլխավոր ճակատի մոտ | — | 1.6/231 | Ղ | խոյատապան | Լուսանկար վերբեռնել |
| Տապանաքար | 16-17-րդ դարեր | Կառավարական երրորդ շենքի գլխավոր ճակատի մոտ | — | 1.6/232 | Ղ | ձիատապան, գլխամասը՝ կոտրված | Լուսանկար վերբեռնել |

## 3.11 Թափոնների կառավարում

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

| | Անվանումը | Վտանգավո-րության դասը | Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի» | Քանակը, |
|---|---|---|---|---|
| 1. | Շինարարական աղբ, այդ թվում քանդման աշխատանքներից առաջացած | IV | 9120060101004 | 70տ |
| 2. | տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) | IV | 9120040001 00 4 | 85 տ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող | VI | 31401100 08 99 5 | 11000մ³ |

Շինարարական աղբը ամբողջությամ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Մարզադպրոցի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

## 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկակական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

### 4.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիակայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

## 4.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում

- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

## 4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

### 4.3.1 *Մթնոլորտային օդ*

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել

- շինությունների ծածկում անթափանց թաղանփով, համապատսխան բարձրության

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.

- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

### 4.3.2 *Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը և անվադողերի լվացումից առաջացած կեղտաջրերը կուղորդվեն պարզարան, որը իրենից ներկայացնում է պլաստմասե տարողություն: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական

նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

### 4.3.3 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ նախատեսված հարթակի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

### 4.3.4 *Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը*

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

### 4.3.5 *Հակահրդեհային միջոցառումներ*

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

### 4.3.6 *Աղմուկ և թրթռում*

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

➢ խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;

➢ Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:

➢ շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

### 4.3.7 *Թափոնների կառավարում*

Մարզադպրոցի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելուընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Մարզադպրոցի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

### 4.3.8 *Էներգախնայողության միջոցառումներ*

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութորով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ /пеноплекс/:

- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

## 5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Մարզադպրոցի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարաության ընթացքում 875 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

| Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ | | |
|---|---|---|
| Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով | | 175000 |
| Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ; | 10x40000 | 400000 |
| Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ: | 10x30000 | 300000 |
| Ամբողջ շինարարության համար | | 875000 |

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ՊԱՐԱՄԵՏՐԵՐ | ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ |
|---|---|---|
| Ընդհանուր դրույթներ | Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն | (a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ<br>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել<br>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:<br>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)<br>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ: |
| Շինարարական աշխատանքներ | Օդի որակ | (a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարրողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար<br>Նշված տարրողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով<br>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով<br>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: |
| | Աղմուկ | (a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում<br>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն: |
| | Թափոնների կառավարում | (a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:<br>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:<br>(c) Շինարարակամ աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից<br>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն<br>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել |
| Կեղտաջրերի հեռացում | Ջրի որակ | (a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով, |

| | | |
|---|---|---|
| | | (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում: |
| Հետիոտների և երթևեկության ապահովություն | Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ | (a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.<br>▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ<br>▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում:<br>▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:<br>▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.<br>▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում |
| Տարածքի բարեկարգում/<br>կանաչապատում | | - կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;<br>-ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար |
| Աղմուկի և թրթռումների կառավարում | | - Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում<br>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,<br>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,<br>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:<br>- Անհարաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը; |

| | | |
|---|---|---|
| թափոնների կառավարում<br><br>▪ | Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;<br><br>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր<br><br>նյութերի արտահոսքի պատճառով<br><br>հնարավոր է վտանգավոր նյութերի<br><br>թափանցում հողի մեջ | - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:<br>- շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շիննրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:<br>- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից<br>- Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն<br>- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել<br>- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը<br><br>Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;<br><br>- Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար; |

## ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

| Գործողություն | Նվազեցնող միջոցառումներ | Որտեղ իրականացնել | Ինչպես իրականացնել | Ժամանակամիջոց | Կատարող |
|---|---|---|---|---|---|
| Շինանյութերի մատակարարում | Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից | Մատակակարի հիմնարկում կամ պահեստում | Փաստաթղթերի ստուգում | Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում | Կապալառու |
| Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ | - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում<br>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ<br>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում | - Շինհրապարակ<br>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ | Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում | Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում | Կապալառու |
| Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում | - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում<br>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում | Մասնագիտացված ընկերություն | Գործընթացների գործունեության ստուգում | Մեխանիզմների շահագործման ընթացքում | Կապալառու |
| Հողային աշխատանքներ | - Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր | Շինհրապարակ | Գործընթացների ստուգում | Հողային աշխատանքների ընթացքում | Կապալառու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Իներտ շինանյութերի գնում | - Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից | Իներտ նյութերի պահեստ | Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում | Մատակարարման ընթացքում | Կապալառու, մատակարար |
| Կենցաղային աղբի առաջացում | - Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում<br>- համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ | Շինհրապարակ | Արտաքին զննում | Շինարարության ողջ ընթացքում | Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողու-թյուն |
| Աշխատանքի անվտանգություն | - Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով<br>- Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն | Շինհրապարակ | Ստուգման գործընթացներ | Աշխատանքների ողջ ընթացքում | Կապալառու, պատվիրատու |
| Տարածքի Կանաչապատում, բարեկարգում<br><br>Վտանգավոր նյու-թերի և թափոնների կառավարում | Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ<br><br>վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր | Կառուցապատվող հողամաս<br><br>Շինհրապարակ | Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին զննում<br><br>Արտաքին զննում | Շինարարության Ավարտին<br><br>Շինարարության ընթացքում | Կապալառու<br><br>Կապալառու, |

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Մթնոլորտային արտանետումների զույքագրման ձեռնարկ, EMEP/EEA, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ձև N 1-2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 01/18-07/2-2242-Ա «08» «11» 2023թ.

**Օբյեկտ** — *Ալբերտ Ազարյանի անվան մարզադպրոցի (բարձր ռիսկայնության օբյեկտ, IV կատեգորիա)*

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն, հանիրի քնդրումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան))

*Մեկ փուլով՝ «Աշխատանքային նախագիծ» կամ երկու փուլով՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր»* նախագծային փաստաթղթերի մշակման համար

(նախագծման փուլերը և այլն)

**Գտնվելու վայրը** — *Կենտրոն վարչական շրջան, Ծիծեռնակաբերդի խճուղի. հ.2/2*

(վարչական շրջանի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

**Կառուցապատող** — *Երևան համայնք ի դեմս «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի*

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

**Առաջադրանքի տրամադրման հիմքը** — *Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 23102023-01-0198 վկայականը, Երևանի քաղաքապետի 31.07.2023թ. հ.2242-Ա որոշումը, ՀՀ կառավարության 30.04.2023թ. հ.402-Ա որոշումը, էսքիզային նախագիծը:*

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

**1. Հողամասը գտնվում է** — *Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, կադաստրային ծածկագիրը՝ 01-006-0619-0036:*

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

**2. (*) Հողամասի չափերը** — *1.5509 հա:*

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

**3. Հողամասի առկա վիճակը** — *Կառուցապատումից ազատ հողամաս:*

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

**4. (*) Տրանսպորտային պայմանները** — *Ծիծեռնակաբերդի խճուղի:*

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

**5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ** (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) — *Կից գործող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:*

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ տողքգենդա)

**6. (*) Կից հողամասեր** — *Ծիծեռնակաբերդի խճուղի, կառուցապատումից ազատ հողամասեր:*

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

**7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)** — --------

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

**8. (*) Հատակագծային սահմանափակումներ** — --------

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

**9. Ճարտարապետահատակագծային պահանջներ** — *Մշակել մարմնամարզության մարզադպրոցի նախագիծ հ. 23102023-01-0198 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:*

(ելնելով ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպված (կազմակերպող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքներ, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) — --------

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) — *Հարակից բնակելի շենքերից, շինություններից և հողապարածքներից կառույցի հեռավորությունը նախատեսել գործող նորմատիվային պահանջների համաձայն:*

9.3.թույլատրելի բարձրությունը (մետր) — *Կառույցի առավելագույն բարձրությունը նախատեսել մինչև 19.00մ:*

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) — --------

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անցումային) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) — *Համաձայն ներկայացված էսքիզային նախագծի:*

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) — *Համաձայն ներկայացված էսքիզային նախագծի:*

9.7. այլ պահանջներ

- *ՀՀ կառավարության 19.03.2015թ. 596-Ն որոշման 1-ին հավելվածի 87-րդ կետի և սույն Նախագծման թույլտվության 23-րդ կետով ամրագրված դրույթների համաձայն՝ էսքիզային նախագծի միջանկյալ համաձայնեցման փուլում անհրաժեշտ է ապահովել կառույցի եռաչափ տեսքի տեղակայումը տարածական միջավայրում:*
- *Նախագծով ապահովել հարակից տարածքների շահագործման նորմատիվային պահանջները:*
- *Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները:*
- *Իրականացնել կենտրոնացված օդափոխության համակարգ:*
- *Նախագծով լուծել ավտոտրանսպորտի անվտանգ ելումուտի և բացօթյա ավտոկայանման խնդիրները:*
- *Տանիքները նախատեսել կազմակերպված ջրահեռացմամբ:*

| | |
|---|---|
| 10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը | ------- |
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | *Լուծումները մշակել համաձայն պատվիրատուի պահանջների:* |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | *Նախագծի ինժեներական մասը մշակել իրավասու կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմաններին համաձայն:* |
| 12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում | *Կցվում է* (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2. (*) էլեկտրամատակարարում | *Կցվում է* (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3. (*) գազամատակարարում | *Կցվում է* (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | ------- (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նպատակային տվյալների) |
| 12.5. թույլ հոսանքներ | ------- |
| 12.6. աղբահանություն | ------- |
| 13. Տարածքի ինժեներական նախապատրաստում | *Կազմակերպել ջրահեռացում:* (ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները) |
| 14. Բարեկարգում | *Հարակից տարածքը բարեկարգել:* (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն) |
| 15. Շինարարական նյութեր | *Երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր:* (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ) |
| 16. Պաշտպանական կառույցներ | *Նախատեսել արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:* (արտակարգ իրավիճակներում մարդկանց, օբյեկտների պաշտպանության միջոցառումները) |
| 17. Հակահրդեհային պահանջներ | *Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները, ապահովել հրշեջ հիդրանտների առկայությունը:* (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները) |
| 18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ | *Նախատեսել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմին համապատասխան:* |
| 19. Շրջակա միջավայրի պահպանում | • *Նախատեսել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ:*<br>• *Ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և տեխնածին ծագման գործոններին սանիտարական կանոններով և նորմերով, շինարարական նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջները:* (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները) |
| 20. Շինարարության կազմակերպում | *Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ. 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:* |

111. Նոր կառուցվող շենքերի, շինությունների համար շինարարության թույլտվությունը տրվում է 2 տարի ժամկետով, եթե տվյալ օբյեկտի շինարարության համար քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի ՍՆիՊ 1.04.03-85* (Ձեռնարկությունների, շենքերի և կառույցների շինարարության տևողության նորմերը) գերատեսչական ակտով սահմանված նորմերով այլ ժամկետներ նախատեսված չեն:
112. Գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման և բարեկարգման աշխատանքների համար թույլտվությունը տրվում է նախագծային փաստաթղթերով տվյալ օբյեկտի շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) տևողության նորմերով հաշվարկված ժամկետով:

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

| | |
|---|---|
| 21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը | *Երեք տարի:* (նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը) |

## Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

| | |
|---|---|
| 22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ | *ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն՝ պետական համալիր փորձաքննություն, այդթվում նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ:* (ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի հրաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին) |
| 23. Միջանկյալ համաձայնեցում | • *Էսքիզային նախագծի միջանկյալ համաձայնեցում Երևանի քաղաքապետարանի հետ:*<br>• *ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ:*<br>(Լիազոր մարմնի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ) |
| 24. Հասարակական քննարկումներ | ------- (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով) |
| 25. Համաձայնեցումներ | • *Երևանի քաղաքապետի հետ:*<br>• *Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ:*<br>(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատիրոջ (օգտագործողի) հետ) |
| 26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում | ------- |
| 27. Այլ պայմաններ | *Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու մասին» հ. 128-Ն հրամանով հաստատված դրույթներին:* |

ստորագրությունը

Կ. Տ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝
Տ.ԱՎԻՆՅԱՆ

Կատարող՝ Է.Օրդոխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 28 հունիսի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՀՐԱԶԴԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Կենտրոն Ծիծեռնակաբերդի խճուղի 2/2

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Երևանի քաղաքապետի 18.08.2001թ. N 940 և 28.11.2001թ. N 1478 որոշումներ, ՀՀ մշակույթի երիտասարդական հարցերի սպորտի նախարարության 11.09.2001թ. N02/2054 գրություն, Երևանի քաղաքապետի 19.06.2023թ. N 1572-Ա որոշում, Երևանի քաղաքապետի 23.06.2023թ. N 1686-Ա որոշում

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-006-0619-0036
Մակերեսի չափը (հա)՝ 1.5509
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 28062023-01-0281, գաղտնաբառ՝ ACD4JUETKNWJ**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Էջ 1/2

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Առկա են 92.22 քմ ինքնակամ շինություններ, որոնք հաշվառման են ներկայացրել ՀՀ Կառավարության 05.01.2022թ. N14-Ն որոշման ժամկետի ավարտից հետո: Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է 04.10.2005թ.N 199-Ն ՀՀ օրենքի 23-րդ /ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ/ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու դեպքում:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳՈՀԱՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 28062023-01-0281, գաղտնաբառ՝ ACD4JUETKNWJ**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

Էջ 2/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

ՀՀ, ք. Երևան ,Ա.Արմենակյան փող.127

N ՏՊ-ՃՀԱ-0.4/0799

<<15>> 09 2023թ.

# ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՃՀԱ տրամադրելու համար

**Տրվում է՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝**
**Լ. Առաքելյանին (08.09.2023թ., 50/164233-23)**
**Սպառիչի գործունեությունը և հասցեն՝ ք. Երևան, Կենտրոն, Ծիծեռնակաբերդ h. 2/2 /Ա. Ազարյանի անվան մարմնամարզության նոր մարզադպրոցի կառուցում/:**
**Պահանջվող հզորությունը՝ 400 կՎԱ**
**Սնող ցանցի լարումը՝ 0.4 կՎ**

1. Անհրաժեշտ էլեկտրամատակարարումը հնարավոր կլինի իրականացնել՝ կառուցվելիք ենթակայանի 0.4 կՎ. վահանից:
   Նոր ենթակայանի 6կՎ էլ.սնումը կարելի է իրականացնել՝ <<Ծիծեռնակաբերդ>> 110/6կՎ ենթակայանի 6կՎ բջիջից:
2. **Անվտանգության գոտիները խախտված չեն:**
3. Մարզադպրոցի նախագիծը անհրաժեշտ է համաձայնեցնել՝ <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲ ընկերության տեխնիկական տնօրենի հետ:
4. Էլեկտրամատակարարման իրականացման համար, անհրաժեշտ է դիմել «ՀԷՑ» ՓԲԸ ցանկացած սպասարկման կենտրոն (մասնավորապես՝ ք. Երևան, Արմենակյան 127)՝ ներկայացնելով՝ՀԾԿՀ 25.12.2019թ.,№523-Ն որոշման 26 գլխի, 159 կետի պահանջներով նախատեսված փաստաթղթերը՝ էլ. ցանցին միացման պատվեր ձևակերպելու համար:
5. 3-րդ կետի պահանջի չկատարման դեպքում՝ սույն տեխնիկական պայմանները կհամարվեն անվավեր:

**Տեխնիկական տնօրեն** **Դ. Գրիգորյան**

ԱՏԾ պետ
Կ. Միքայելյան